ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Ճարտարապետության դոկտոր Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ ժողովրդի պատմական դժվարին ճակատագրի հետևանքով դեռևս վաղ միջնադարում սկսված արտագաղթը առավել մեծ չափերով շարունակվեց ուշ միջնադարում, երբ Հայաստանը հեծում էր օտար նվաճողների ծանր տիրապետության տակ։ Տարբեր երկրներում հանգրվան գտած հայերը ստվարացրին գոյություն ունեցող գաղթավայրերը կամ ստեղծեցին նորերը։ Լինելով շինարար ու ձեռներեց և հարմարվելով տեղի պայմաններին ու ձեռք բերելով որոշ արտոնություններ, նրանք զարկ տվեցին արհեստագործական արտադրությանը, առևտրի ու մշակույթի զարգացմանը, ծավալեցին շինարարական գործունեություն, օտար ափերում գոյատևելու հնարավորություններ ստեղծեցին իրենց համար[1]։

Հայաստանից դուրս կառուցապատվեցին Նոր Ջուղա, Նոր Նախիջևան, Գրիգորիոպոլ և Արմավիր քաղաքները, գյուղական բնակավայրերը։ Հաստատվելով Մոսկվայում, Պետերբուրգում, Եկատերինոդարում (Կրասնոդար), Աստրախանում, Ստավրոպոլում, Ղզլարում, Մոզդոկում, Կամենեց-Պոդոլսկում, Լվովում և այլուր, հայերը հիմնեցին հայկական փողոցներ, առևտրահասարակական կենտրոններ, առևտրական շարքեր ու պանդոկներ, կառուցեցին բազմաթիվ եկեղեցական և այլ բնույթի շենքեր։

Ռուսաստանի հայկական գաղթավայրերի շինարարական գործունեությանը նվիրված աշխատությունները արժեքավոր տեղեկություններ են պարունակում հայերի ծավալած քաղաքաշինական աշխատանքների, կառուցած տարբնույթ շենքերի մասին[2]։ *Արտագաղթած հայերը նույն ջանքերը գործադրե-*

---

1 *Հայ ժողովրդի պատմություն. հ. 4, Երևան, 1973, էջ 324—432։ Վ. Ա. Միքայելյան. Ղրիմի հայկական գաղութի պատմություն. Երևան, 1964։* Исторические связи и дружба украинского и армянского народов. Киев, 1985; *Վ. Կ. Ոսկանյան. Ռուսաստանում հայկական գաղութների առաջացման պատմություն.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1966, № 2։ Վ. Բ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի գաղութի պատմություն (1779—1861 թթ.). Երևան, 1967։* Ж. А. Ананян. Армянская колония Григориополь. Ереван, 1969; В. Р. Григорян. История армянских колоний Украины и Польши. (Армяне в Подолии). Ереван, 1980; Л. А. Погосян. Армянская колония Армавира. Ереван, 1981; Я. Р. Дашкевич. Армянские кварталы средневековых городов Украины.—Историко-филологический журнал, 1987, № 2, 3 *և այլն։*

2 *Այդ ուղղությամբ մեծ են Հ. Խ. Խալփախչյանի ջանքերը։ Իր աշխատություններից նշելի են.* Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1957; Застройка Армавира в XIX в.—В сб.: Проблемы истории архитектуры народов СССР, М., 1976; Сооружения армянской колонии в Каменец-Подольском.—Арх. наследство, вып. 28, М., 1980; Жилые дома армян на Дону (там же); К истории строительной деятельности армян на Дону.—*«Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 175—173։ Կարևոր են նաև* А. Л. Якобсон. Армянская средневековая архитектура в Крыму.—Визант. временник. VII; Р. Т. Липка. Ансамбль армянской улицы. Львов, 1983. *(ուկրաիներեն) աշխատությունները և Ջ. Գարսվելլի Նոր Ջուղայի ճարտարապետությանը նվիրված մենագրությունը (տե՛ս* John Garswell. New Julfa. Oxford, 1969).

ցին Մերձավոր Արևելքում (Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Կիպրոսում), Իրանում, Հնդկաստանում, եվրոպական երկրներում (Բուլղարիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Հոլանդիայում) և այլուր։

Տարագիր հայերի շինարարական գործունեության պատմության կարևոր էջեր են կազմում մասնավորապես Նոր Ջուղայի, Նոր Նախիջևանի և Գրիգորիոպոլի հիմնադրումն ու կառուցապատումը։ Տարբեր պայմաններում իրականացված հատակագծերում արտահայտություն են գտել տեղական քաղաքաշինական սկզբունքներն ու ճարտարապետական ոճերը։

ՆՈՐ ՋՈՒՂԱՆ (Սպահանի արվարձանը) հիմնվեց, երբ Շահ Աբբաս I-ի (1587—1629) հրահանգով Ջուղայից ու Արարատյան դաշտից բռնագաղթված հայերը, փոխադրվելով Իրան, բնակություն հաստատեցին Սպահանի մոտակա շրջաններում, իսկ մի մասը հանգրվանեց նոր հիմնադրած բնակավայրում, որը ժառանգելով հին բնակավայրի անունը, կոչվեց Նոր Ջուղա[3]։

Հին Ջուղայից, Դաշտից ու Հայաստանի այլ բնակավայրերից բռնագաղթի ենթարկված հայերին նախապես տեղավորում են Ղազվին քաղաքում և շրջակա գյուղերում։ Ապա, ինչպես հայտնում է Առաքել Դավրիժեցին, գարունը բացվելուն պես «վերստին վարեցին զնոսա մինչև տարեալ հասուցին ի քաղաքն՝ Սպահան՝ և անդեն բնակեցուցին զնոսա՝ տուեալ նոցա տեղի շինութեանն»[4]։

Այս նորահաստատ գաղթավայրի բնակիչները շուտով կարևոր դեր են ստանձնում Իրանի տնտեսական կյանքում, մեծ չափով նպաստում արհեստագործության (կերպասագործության, ոսկերչության, գորգագործության, ներկարարության և այլն) զարգացմանը։ Վաճառականներին վստահվում է հում մետաքսի արտահանման մենաշնորհը, արևելքի և արևմուտքի միջև առևտրի իրականացման միջնորդի դերը։ Շահ Աբբաս I-ի հրովարտակներով տրված արտոնությունների և հայկական համայնքի հանդեպ հոգատար վերաբերմունքի շնորհիվ, Նոր Ջուղան ինքնավարության իրավունքներով օգտվող իր 30 հազար բնակչությամբ արդեն XVII դարում դառնում է առևտրական կապիտալի կենտրոն, ուշ միջնադարում՝ հայկական հոգևոր և մշակութային կյանքի կենտրոններից մեկը, որտեղ բացվում են հայկական տպարան (առաջինը Իրանում), Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը, ուր դասավանդում էին եվրոպական լեզուներ և «Վաճառականական արվեստ»[5]։

Նոր Ջուղան հիմնադրվում է հայերի Սպահան փոխադրվելու հաջորդ տարին՝ 1606 թ.։ Հիմնադրումը կատարվում է Սպահանից հարավ, Հայանգերուդ գետի հարավափնյա կողմում հայերի բնակեցման համար Շահ Աբբաս I-ի հրովարտակով Սպահանի քաղաքապետի (քալանթարի) միջոցով տրամադրված հողատարածության վրա։ Պատմելով այդ մասին, Հ. Տեր-Հովհաննիսյանցը հայտնում է, որ հատակագիծը կազմվել է գեղեցիկ ճարտարապետությամբ և ըստ երկրաչափական գծագրության (առանց նշելու հեղինակի անունը)[6]։ Հատակագծման ու կառուցապատման գործում դժվարություններ չեն առաջացել ջուղայեցիների ցանկությունները հաշվի առնելու տեսակետից, որովհետև հատկացված հողատարածությունը «արկակավայր դաշտ կամ կալուած հողագործութեան» էր[7]։ Այդ տարածության վրա էլ արևմուտքից արևելք ձգվեց Նազար (Խոջա Նազարի անունով) կոչված պողոտան՝ 3276 քայլ երկարությամբ (շուրջ 2,0 կմ) և 16 քայլ լայնությամբ (9,6 մ)։ Սա դարձավ Նոր Ջու-

---

3 Հ. Տեր-Հովհաննիսյանց. Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան. հ. 1—2, Նոր Ջուղա, 1880—1881։ Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, 5, Երևան, 1973—1974; В. А. Байбурдян. Армянская колония Новой Джульфы XVII в., Ереван, 1969.

4 Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ. Վաղարշապատ, 1896, էջ 363։

5 Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 324—337։

6 Հ. Տեր-Հովհաննիսյանց. Նշվ. աշխ., էջ 39։

7 Առաքել Դավրիժեցի, էջ 364։

դալի առևտրահասարակական կենտրոնը։ Պողոտայի երկու վերջավորություններում (որտեղ երբեմնի պարիսպներով շրջապատված քաղաքի երկու դարպասներն էին) իրենց մենատները կառուցեցին մեծահարուստները, այդ թվում լուսավորչական եկեղեցուն դավանող Խոջա Սաֆրազն ու կաթոլիկ Խոջա Շահրիմանը, որի պատճառով արևմտյան դարպասը կոչվեց Սաֆրազյանների, իսկ արևելյանը՝ Շահրիմանյանների անունով[8]։



Նկ. 1. Նոր Ջուղայի հատակագիծը (ըստ Վ. Գարսվելլի)

Նաղար պողոտայից սկզբնավորվում և հյուսիսից հարավ են ձգվում «ուղղաձիգ և լայնարձակ» տասը փողոցներ, հասնելով մինչև դաշտը, ուր բնակավայրի գերեզմանոցն է, հոյակապ քանդակներով զարդարված տապանաքարերով։ Սկզբնապես «Տասնյակ» կոչված այդ փողոցները հետագայում նրանց շարունակությունը կազմող նրբանցքների հետ վերանվանվեցին քաղաքի մեծահարուստների անուններով (Դիլաքյանցների, Մեծ Խոջայի, Փիրմսենց, Գիլանենց, Բաղրամյանենց, Ավագյանենց, Միրվանյանենց, Ջեքյանենց և այլն)։ Այդ համակարգի փողոցների մեջ տարանցիկը Հակիմ Նիզամի (Նախկին Ջարսուի) պողոտան էր, որը ողջ բնակավայրով հարավից հյուսիս ձգվելով ու հատվելով Նաղար պողոտայի հետ, Ջայանգերուդ գետի վրա ձգված կամրջային անցումով հասնում է Սպահանի կենտրոնը[9]։

Հիշյալ փողոցներով առաջացած թաղամասերը (որոնց մի մասը միայն կանոնավոր ձևեր ունի) նույնպես իրենց անունները ստացան (Երևանի, Թավրիզի, Հակոբջանյանների, Մեծ Մեյդան, Փոքր Մեյդան, Ջարսու, Քոչեր, Շարագել), ըստ որում դրանցից Մեծ և Փոքր Մեյդաններն ու Ջարսուն (շուկայի

8 Հ. Տեր-Հովհաննես. նշվ. աշխ., էջ 39։

9 Սխեմատիկ հատակագիծը բերված է Ջ. Գարսվելլի նշված աշխատության մեջ, 19-րդ էջում։

հրապարակը) հասարակական կենտրոնների նշանակություն ունեն։ Այդ թաղամասերը նախապես Ջուղա էին կոչվում։ Երևան, Թավրիզեցոց կամ Մահլաթ, Քոչեր և Գաղդ կոչված թաղամասերը ավելացվեցին հետագայում, երբ Սպահանի քաղաքամիջի հայերն այստեղ փոխադրվեցին ու նորաստեղծ բնակավայրը Նոր Ջուղա կոչեցին։

Վերը թվարկած թաղերն ունեին իրենց թաղային եկեղեցիները (ըստ Հ. Տեր-Հովնանյանցի՝ 17), այդ թվում մեկը Մեծ Մեյդանում՝ Ս. Ամենափրկիչ կաթողիկեն։ Դրանցից մի քանիսը շարքից դուրս են եկել և Ջ. Գարսվելլի ուսումնասիրության մեջ ընդգրկված են 13-ը։ Թաղամասերով անցնող փողոցների երկու կողմերում ծառերի շարքեր և առուներ են ձգվում։ Այս է Սպահանին կից առաջացած հայկական Նոր Ջուղա բնակավայրի հակիրճ նկարագիրը։

Նոր Ջուղան իր ծաղկումն ապրեց XVII դարի ընթացքում, հատկապես կեսին և երկրորդ կեսին։ Դարավերջին ստեղծված աննպաստ պայմանների (Իրանի տնտեսական ճգնաժամի, հայերի արտոնությունները սահմանափակելու, ազգային կրոնական հալածանքների ուժեղացման) պատճառով Նոր Ջուղան սկսում է անկում ապրել, մեծահարուստների մի մասը փոխադրվում է Հնդկաստան և այլ երկրներ։

Նոր Ջուղայի կառուցապատման, շենքերի ճարտարապետության ու ներքին ճոխ բարեզարդման մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնում Առաքել պատմիչը. «...շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թեւաւոր ապարանօք, և ամարասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պէս պէս երանգաց ակնախտիղ տեսողաց։ Սոյնպէս շինեցին և զեկեղեցիսն հրաշազան յօրինուածովք ըստ արժանւոյն փառացն Աստուծոյ, երկնանման խորանօք և գերամբարձ կաթողիկէիւք, բովանդակ ծաղկեալ պէս պէս երանգովք ոսկւով և լաջվարդով, տնօրիկանօք Տեառն և պատկերովք սրբոց։ Եւ ի գլուխ կաթողիկէից ամենայն եկեղեցաց կառուցեալ զնշան սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն ի պսակ և ի պարծանս քրիստոնէից»[10]։

Այդպիսին է Նոր Ջուղայի փառքի ականատես Առաքել Դավրիժեցու գնահատականը, որը հաստատվում է նաև քաղաքն այցելած օտարերկրյա ճանապարհորդներ Տավերնիեի, Տուրնեֆորի, Շարդենի և ուրիշների նկարագրություններով։ Ջոն Գարսվելլը, անդրադառնալով քաղաքի այժմյան վիճակին, նշում է. «...մի քանի տասնյակ ճարտարապետական հուշարձաններ պերճախոս ականատեսներ են Նոր Ջուղայի երբեմնի ծաղկուն և երփներանգ տարիների»[11]։

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ. Ռուս-թուրքական 1768—1774 թթ. պատերազմի հաջող ավարտից հետո վերջապես առիթ է ստեղծվում իրականացնել Ղրիմի խանությունը թուլացնելու նպատակով Տավրիկյան թերակղզում դեռևս միջնադարում հանգրվանած քրիստոնյա (հայեր և հույներ) բնակչությունը Ռուսաստանի հարավային, համարյա անմարդաբնակ տափաստանները փոխադրելու մասին ռուսական միապետության վաղեմի մտադրությունը[12]։

Չի կարելի ասել, թե տեղահանության գաղափարը հավասարապես բաժանում էին ղրիմահայության բոլոր շրջանները։ Թեև վերնախավը, հատկապես մեծահարուստների դասը, վերաբնակեցման ջերմ կողմնակից էր, որովհետև այդ միջոցով նպատակադրվում էր առավել շահավետ առևտրական գործարքներ ծավալել լայնածավալ Ռուսաստանի շուկաներում, սակայն ղրիմահայերի զգալի մասը չէր հաշտվում դարերի ընթացքում բազում ջանքերով

---

10 Առաքել Դավրիժեցի, էջ 63—64։

11 John Garswell. Op. cit., p. 15.

12 Հայ ժողովրդի պատմություն. հ. 4, էջ 415—416։

ստեղծված բնակատեղերը, գործատեղերը, խնամված այգիներն ու պարտեզները, հարազատների շիրիմները, վանքերն ու եկեղեցիները լքելու մտքի հետ[13]։

Այնուհանդերձ թուրք-թաթարական ծանր լծից ազատագրվելու ձգտումը հաղթանակեց։ Ռուսաստանի հայ լուսավորչական եկեղեցու առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկը և ղրիմահայության համբավավոր գերդաստանի ներկայացուցիչ Հովհաննես Լազարյանը ղրիմահայերի անունից խնդրամատույց եղան Եկատերինա II կայսրուհու առաջ՝ Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու մասին։ Կայսրուհու հատուկ հրովարտակով փոխադրվողներին բնակության տեղ է հատկացվում Ազովի նահանգում[14]։



Նկ. 2. Նոր Նախիջևան քաղաքի հատակագիծը (ըստ Հ. Խալփախչյանի)

Ռուսական արքունիքի հետ բանակցություններ վարելու գործում բարի միջնորդի դեր է կատարել Նովոռոսիայի կառավարիչ գեներալ Գ. Ա. Պոտյոմկինը։ Վերջինս ի կատարումն կայսրուհու հրամանի ղրիմահայերին գաղթեցնելու գործի կազմակերպումը հանձնարարում է գեներալ պորուչիկ (հետագայում նշանավոր ռուս զորավար) Ա. Վ. Սուվորովին[15]։ Նրա գլխավորությամբ Ղրիմի տարբեր բնակավայրերից՝ Կաֆայից, Բախչիսարայից, Ղարասու-բազարից, Կոզլովից ու շրջակա գյուղերից 1778 թ. սկսվում է հայերի առաջին տեղահանությունը։ Այդ և հաջորդ տարում արտագաղթի են ենթարկվում ընդհանուր թվով 12.600 հայեր, որոնք գաղթի ճանապարհներին կրում են բազում փորձություններ և նյութական զրկանքներ։

Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով վերաբնակեցման ենթարկված հայերին տրվեցին մի շարք առանձնաշնորհումներ։ Նրանք 10 տարով ազատվեցին հարկերից, ստացան Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս առևտրով զբաղվելու, ինչպես նաև երկրագործությամբ (յուրաքանչյուր երկրագործին տրամադրելով 30 դեսյատին հողամաս) և արդյունագործությամբ պարապելու իրավունք։ Շնորհված արտոնություններ-

13 Վ. Բ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861), էջ 37—41։

14 Նույն տեղում, էջ 46։

15 М. Г. Нерсисян. А. В. Суворов и русско-армянские отношения в 1770—1780-х годах. Ереван, 1981, с. 8—28.

րի կարևոր մասն էին կազմում դավանանքի ազատությունը, մայրենի լեզվով դատավարության (Աստրախանի հայոց դատաստանագրքով) իրավունքը։ Ինքնավարությունն իրականացվում էր քաղաքապետարանի (մագիստրատի) միջոցով, որին ենթակա էին դատական և ոստիկանական մարմինները։

Հայ գաղթականների բնակեցման համար հատկացվում է Դոն գետից հյուսիս ընկած աջափնյա ընդարձակ տարածությունը։ Դոնի անմիջական ափին, Ս. Դմիտրի Ռոստովսկու ամրոցին մոտ հատկացված հողատարածության արևելյան սահմանի վրա հիմնադրվում է Նոր Նախիջևան քաղաքը, իսկ դրանից հյուսիս և հյուսիս-արևմուտք ընկած տարածքի վրա տեղաբաշխվում են Մեծ Սալա, Սուլթան Սալա (կամ Փոքր Սալա), Նեսվիտա, Թուփտի (կամ Ղրիմ), Զալթիր, իսկ հետագայում՝ Եկատերինավան (կամ Սամբեկ) գյուղական բնակավայրերը[16]։

Նոր Նախիջևանն ու շրջակա գյուղերը կազմեցին արտագաղթած ղրիմահայերի հիմնական խմբավորման բնակավայրերը, բայց ոչ բոլոր։ Նրանց որոշ մասը տեղավորվեց նույն նահանգի այլ բնակավայրերում՝ Ազովում, Չերկասկում (այժմ Ստարոչերկասկ), Տագանրոգում, Կուբան և Թերեք ստանիցաներում[17]։ Նյութական մեծ ներդրումներ պահանջող Նոր Նախիջևանի և հիշատակված գյուղերի կառուցապատմանը նպաստելու համար Եկատերինա II կայսրուհու հրովարտակով տեղական իշխանություններին թույլատրված էր պետական գանձարանի հաշվին կառուցապատողներին (հատկապես մենատների) անվճար տրամադրել շինանյութեր, այդ թվում անտառանյութ։ Դրա հետ մեկտեղ, տեղահանված հայերին պետական գանձարանի հաշվին զգալի գումար է հատկացվել՝ կապված գաղթազնացության և տեղավորվելու ծախսերի հետ[18]։

Նոր Նախիջևանի հիմնադրման հանդիսավոր արարողությունը տեղի է ունենում 1781 թ. ապրիլի 21-ին, որի ժամանակ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը կարդում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կոնդակը, օծում բնակավայրի հողն ու ջուրը, քաղաքի չորս անկյուններում դրվելիք հիմնաքարերը, որոնք հանդիսավոր թափորի ուղեկցությամբ տեղավորվում են ապագա քաղաքի ծայրանկյուններում[19]։

Նորահաստատ քաղաքը ստանում է իր տարբերանշանը, որը խորհրդանշելով հայերի աշխատասիրությունը, պատկերում է մեղուներ և փեթակ։ Սկզբնապես Նախիջևան (հայերի կողմից՝ Նոր Նախիջևան) կոչված քաղաքը Արաքս գետի ափամոտ Նախիջևանից տարբերելու համար 1838 թ. վերանվանվում է Դոնի Նախիջևան[20]։

Նոր Նախիջևանի կառուցապատման սկզբունքի մասին գաղափար են տալիս հրատարակված գլխավոր հատակագծերը[21]։ Վ. Բարխուդարյանի հրատա-

---

16 О. Х. Халпахчьян. Жилые дома армян на Дону.—Арх. наследство, вып. 33, М., 1985, с. 123. Հեղինակը կազմել է հատկացված հողատարածության և հիմնադրած բնակավայրերի սխեմատիկ քարտեզը։

17 Նույն տեղում, էջ 122։

18 Վ. Բ. Բարխուդարյան. Նշվ. աշխ., էջ 59—60։

19 Նույն տեղում, էջ 55։

20 О. Х. Халпахчьян. Жилые дома армян на Дону, с. 122.

21 О. Х. Халпахчьян. Армяно-русские культурные отношения, рис. 36; Он же. Культовые сооружения новонахичеванских армян, с. 108. Հ. Խ. Խալփախչյանը ներկայացրել է արխիվային փաստաթղթի (ЦГВИА, ВУА, д. 22214) հիման վրա իր կողմից կազմած սխեմատիկ հատակագիծը, իսկ Վ. Բարխուդարյանը՝ Ռոստովի մարզային պետական արխիվում (ֆոնդ 579) գտնվողը։ Վերջինս հիշատակված է որպես իսկական պատճեն, կատարված Ռարտ. օգնական Յակով Շարինֆսկու կողմից 1836 թ.։ Վ. Բարխուդարյանը, առանց հիշատակելու աղբյուրը, որպես հատակագծի հեղինակ նշել է Ի. Ստարովին։ Հ. Խալփախչյանը (տե՛ս Культовые сооружения новонахичеванских армян, с. 109) Ստարովին վերագրում է միայն Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի եկեղեցու նախագծի հեղինակությունը։

բակած հատակագիծն ունի սաժենային մասշտաբ ու վերնագրված է «План Полколия(?) городов Ростова крыпости св. Дмитрия и армянского города Нахичевана состоящих Екатеринской Губерни». Քաղաքաշինական այդ փաստաթուղթը, որում ներկայացված են Նոր Նախիջևան և նրանից ավելի ուշ՝ 1811 թ. հիմնադրված Ռոստով քաղաքների հատակագծերը, կազմված է համաձայն XVIII դարի երկրորդ կեսից Ռուսաստանում լայն տարածում ստացած կանոնավոր հատակագծման (регулярная планировка) սկզբունքի։

Ռուսաստանի քաղաքաշինության մեջ այդ սկզբունքը սկսեց արմատավորվել 1763 թ. օրենքից հետո, որի համաձայն յուրաքանչյուր նահանգի տներն ու փողոցները պետք է կառուցվեին հատուկ նախագծերով, որպիսիք պետք է կազմվեին ռուսական շատ քաղաքների վերակառուցման կամ նորերի կառուցապատման համար։ Այդ կատարվում էր «Սանկտ-Պետերբուրգի և Մոսկվայի քարե շինությունների հանձնաժողովի» (ստեղծված 1762 թ.) կողմից կամ նրա անմիջական հսկողության ներքո։ Սենատոր Ի. Ի. Բիցկու գլխավորած հանձնաժողովի կազմում մտնում էին իր ժամանակի ռուս նշանավոր Հարտարապետներ, այդ թվում Ի. Ե. Ստարովը։ Մինչև դարավերջ մշակվել և հանձնաժողովի կողմից հաստատվել են 400 քաղաքների գլխավոր հատակագծեր։ Դրանց հիմքում ընկած էր անտիկ հունա-հռոմեական քաղաքաշինական արվեստից ժառանգաբար որդեգրած բնակավայրի հատակագծային հորինվածքը՝ ըստ ամենայնի երկրաչափական կանոնավորությամբ, փողոցների որոշակի դիրքորոշմամբ երկրի կողմերի նկատմամբ (հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք)։ Այդ հորինվածքին բնորոշ է փոխուղղահայաց փողոցների ցանցով քաղաքատարածության պատումը, փողոցների հատումով ուղղանկյուն թաղամասերի կազմավորումը, գլխավոր և երկրորդական առևտրահասարակական և պաշտամունքային կենտրոնների տեղաբաշխումը և այլն[22]։

Նոր Նախիջևանի հատակագիծը՝ հաստատված «Սանկտ-Պետերբուրգի և Մոսկվայի շինությունների հանձնաժողովի» կողմից 1781 թ. նոյեմբերին[23], քաղաքաշինական նույն սկզբունքի կիրառության օրինակներից մեկն է և մշակված է դրա պահանջների իմացությամբ։ Ըստ այդ փաստաթղթի քաղաքն ընդգրկել է շուրջ 350 հա (800×980 սաժ.) տարածություն[24], որը պատված է փոխուղղահայաց փողոցների կանոնավոր ցանցով, առաջացնելով տարբեր չափերի ուղղանկյուն թաղամասեր։

Հասարակական-պաշտամունքային կենտրոնը հանդիսանում էր քառանկյունի ընդարձակ (150—220 սաժ., 7,0 հա) հրապարակը։ Նրա մեջտեղում 1783—1807 թթ., ենթադրաբար Ի. Ե. Ստարովի նախագծով, կառուցվել է քաղաքի Ս. Գր. Լուսավորիչ գլխավոր եկեղեցին (քանդվել-վերացվել է 1960-ական թթ.)։ Դրան ժամանակակից է քաղաքից ոչ հեռու, հյուսիսակողմում, 1786—1792 թթ. կառուցված Ս. Խաչ վանքի եկեղեցին, որի նախագծի հեղինակը նույնպես Ի. Ե. Ստարովն է ենթադրվում։ Քաղաքի Ս. Համբարձման, Ս. Թեոդորոս, Ս. Աստվածածին, Ս. Նիկողայոս, Ս. Գևորգ և Ս. Կարապետ թաղային եկեղեցիները, ինչպես նաև Սուլթան Սալայի (XIX դարի կես), Նեսվի-

---

22 А. В. Бунин, Т. Ф. Саваренская. История градостроительного искусства. М., 1979. Т. I, с. 366—465; Т. С. Проскурякова. О регулярности в русском градостроительстве XVII—XVIII вв.—Арх. наследство, вып. 28. М., 1980, с. 37—46; О преемственности в русском градостроительстве II половины XVII в.— Арх. наследство, вып. 33, М., 1985, с. 40—51. Սրանցում բերված օրինակներում չեն հիշատակված Նոր Նախիջևանը, Գրիգորիոպոլը և Ռոստովը, որոնց գլխավոր հատակագծերը մեծ ընդհանրություն ունեն Լուգայի (1778), Մոսալսկի (1779) և այլ քաղաքների գլխավոր հատակագծերի հետ։

23 О. Х. Халпахчьян. Культовые сооружения новонахичеванских армян, с. 107.

24 Չափերը մոտավոր են։

տայի Ս. Կարապետ (XIX դար), Ջալթրի Ս. Համբարձման (1860—1877 թթ.), Մեծ Սալայի Ս. Աստվածածին (1860—1867 թթ.), Ղրիմի (Թուփթիի) Ս. Ամենափրկիչ (XIX դար) եկեղեցիները համարյա զուրկ են հայկական ճարտարապետության նկարագրից, արտահայտում են ռուսական կլասիցիզմի ճարտարապետական ոճը[25]։ Նույնպիսին է Նոր Նախիջևանի զգալի թվով մենատների



Նկ. 3. Գրիգորիոպոլ քաղաքի հատակագիծը

(Ն. Տիտրովայի, Գ. Զուբարովի, Մորոզովների, Ի. Կելլե-Շագինովի, Ի. Բալաբանովի, Լ. Պոպովի, Ե. Կրասիլնիկովի և այլոց) ճարտարապետական նկարագիրը[26]։ Պետք է ենթադրել, որ դրանց համահնչուն է քաղաքի առայժմ ուսումնասիրությամբ չընդգրկված վարչա-հասարակական և ուսումնական շենքերի ճարտարապետությունը։

ԳՐԻԳՈՐԻՈՊՈԼԻ հիմնադրումը տեղի ունեցավ 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ տարած հաղթանակի և կնքած պայմանագրի համաձայն Մոլդավիայից և Բեսարաբիայից գաղթեցվեցին շուրջ 4000 հայեր ու ժամանակավորապես տեղավորվեցին Դուբասար քաղաքում, որպեսզի հետագայում վերաբնակեցվեն այդ նպատակով կառուցապատվող Գրիգորիոպոլ քաղաքում, Իոսիֆովկա ու Վասիլևկա գյուղերում[27]։ Գրիգորիոպոլը նախատեսվում էր Ակկերմանից, Իզմայիլից, Քաուշանից, Բենդերից և Քիլից հայերի վերաբնակեցման համար։ Զուգահեռաբար ջանքեր էին գործադրվում, որ-

---

25 О. Х. Халпахчьян. Культовые сооружения новонахичеванских армян, с. 107—121. Հեղինակը ներկայացրել է հիշատակված եկեղեցիների հատակագիծն ու լուսանկարները։

26 О. Х. Халпахчьян. Жилые дома армян на Дону, с. 122—139.

27 Հայ ժողովրդի պատմություն. հ. 4, էջ 416։

պեսզի, ի թիվս մեծահարուստ վաճառականների, այստեղ հայեր փոխադրվեն նաև Կոստանդնուպոլսից և Հնդկաստանից[28]։

Գրիգորիոպոլի հիմնադրման ծրագրի իրականացումը Եկատերինա II կայսրուհին հանձնարարում է իշխան Գ. Ա. Պոտյոմկին-Տավրիչեսկուն և Ռուսաստանում հայ լուսավորչական եկեղեցու թեմական առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկին։ Այդ գործում իրենց մասնակցությունն են բերել նաև «այրարատյան դեսպան» Ստեփան Դավթյանը (որը դեռ 1789 թ. թուրքերի դեմ մղած պատերազմի ժամանակ գլխավորել էր տեղի հայերից կազմված կամավորական ջոկատները), արքեպիսկոպոս Գրիգոր Ջաքարյանը, ինչպես նաև ռուս մեծ զորավար Մ. Ի. Կուտուզովը[29]։

Բնականաբար, թուրքական տիրապետությունից ազատագրվելու ձգտող հայերի մեծ մասը հոժարակամ համաձայնվեց փոխադրվել Ռուսաստան, ապավինել քրիստոնյա պետության պաշտպանությանը, ինչի մասին շատերը բազմիցս դիմել էին Հովսեփ Արղությանին, Ստեփան Դավթյանին և ռուսական հրամանատարությանը։

Բավարարելով հայերի կողմից ներկայացված դիմումին, Գրիգորիոպոլ քաղաքի կառուցապատման համար տրամադրվում է Տիրասպոլ քաղաքից 45 կմ հյուսիս-արևմուտք, Ջորնայա և Ջորնիցի հովիտների ելուստում ընկած Դնեստր գետի ձախափնյա հողատարածությունը, որպիսին հարմար է նկատվում բնակչության առևտրով և այգեգործությամբ զբաղվելու համար։ Քաղաքի հատակագծման ու կառուցապատման հետ կապված բազմապիսի հարցերի լուծմամբ զբաղվում են Եկատերինոսլավի գավառապետ Վ. Վ. Կախովսկին և արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը[30]։

Տրամադրված հողատարածությունը ուսումնասիրելուց հետո, 1791 թ. հանձնարարվում է կազմել Գրիգորիոպոլի գլխավոր հատակագիծը, որը պատրաստ վիճակում ներկայացվում է հաստատման 1792 թ. ապրիլի կեսին։ Հովսեփ Արղությանի եղբորորդուն՝ Բարսեղ Արղությանին է հանձնարարվում հատակագիծը հաստատման ներկայացնել Եկատերինա II կայսրուհուն, որը 1792 թ. հունիսի 10-ին հաստատում է Գրիգորիոպոլի գլխավոր հատակագիծը և հատուկ սուրհանդակի միջոցով հետ ուղարկում Դուբոսար, ուր այն հասնում է հուլիսի 17-ին[31]։

Հուլիսի 25-ին նախապատրաստություններ են տարվում, իսկ 26-ի առավոտյան տեղի է ունենում Գրիգորիոպոլի հիմնադրման հանդիսավոր արարողությունը։ Վ. Վ. Կախովսկու և Հ. Արղությանի գլխավորությամբ արարողությանը մասնակցելու էին եկել արտասահմանից հրավիրված հյուրեր, իշխաններ, պաշտոնյաներ, ազնվականներ, հայկական, ռուսական և մոլդավական եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ, հասարակ ժողովուրդը՝ այստեղի ապագա բնակիչները։

Նոր հիմնադրած քաղաքի կառուցապատման աշխատանքների կազմակերպման համար փոխգնդապետ Մ. Ջվերյովի ղեկավարությամբ ստեղծվում է «շինարարական արշավախումբ» կոչված հիմնարկությունը, լուծվում են շինանյութի հայթայթման, շենքերի նախագծերի (բնակելի տները՝ տիպային) ապահովման, նրանց իրականացման համար պետական ֆինանսավորման (յուրաքանչյուր բնակելի տան համար՝ 230 ռ. 50 կ.) և այլ հարցերը։ Քաղաքապետ է նշանակվում Նոր Նախիջևանից հրավիրված, գաղթականների բնակեցման ու քաղաքի հիմնադրման ջանքերին մասնակցություն բերած հայազգի պորուչիկ Պավել Թումանովը։ Այդ միջոցառումների շնորհիվ Գրիգորիոպոլում ծավալվում են կառուցապատման աշխատանքները։ Արդեն հաջորդ ամսին կառուցված էին 100-ից ավելի բնակելի տուն, 16 խանութ, այլ շենքեր,

---

28 Ж. А. Ананян. Указ. соч., с. 30—35.

29 Նույն տեղում, էջ 31։

30 Նույն տեղում, էջ 28—95։ Ժ. Անանյանը արխիվային փաստաթղթերի հիման վրա հանգամանորեն շարադրել է քաղաքի հիմնադրման և կառուցապատման պատմությունը։

31 Նույն տեղում, էջ 61, 64—65։

փորված էին 43 ջրհոր[32]։ Առավել ինտենսիվորեն կառուցապատման աշխատանքները շարունակվեցին 1793-ին և հիմնականում ավարտվեցին XIX դարի սկզբներին։

Եկատերինա II կայսրուհու 1794 թ. հոկտեմբերի 12-ի հրամանագրով Գրիգորիոպոլը մտավ Եկատերինոսլավի նահանգի մեջ, ստացավ իր տարբերանշանը (գերբը), կնիքը, քաղաքապետարանին (մագիստրատին) հասնող դասային-ներկայացուցչական հաստիքները։ 325 բնակելի տների, քաղաքապետարանի, եկեղեցիների և այլ շենքերի կառուցման համար տրամադրվեց ավելի քան 100 հազար ռուբլի։ Քաղաքի բնակչությանը շնորհվեցին մի շարք արտոնություններ, այդ թվում՝ աղատ առևտրի։

Գրիգորիոպոլի կառուցումն իրականացվել է ըստ գլխավոր հատակագծի՝ նաղմված հոդաչափ Պավել Զուիկի կողմից։ Այդ հատակագծի հայերեն մակագրություններ ունեցող ու «Զև Գրիգորիոպոլին Հայոց» («План городу Григориополу») անվանված տարրերակը 34×44 սմ չափի մետաղաթերթի վրա 1793 թ. Սանկտ-Պետերբուրգում հայերը փորագրել են տվել սուրաթարնակ ջուղայեցի Հովհաննես աղա Գերաքյանի ծախքով։ Դա քաղաքաշինական հետաքրքիր փաստաթուղթ է, այն էլ հայերեն (թերևս միակը) մակագրություններով[33]։

Ըստ այդ հատակագծի Գրիգորիոպոլի քաղաքատարածությունը նոր նախիջևանի պես գետափնյա տեղագրություն ունի նավարկելի Դնեստր գետի ձախ ափին ու նույնպես կազմված է ենթոնտվոր կառուցապատման սկզբունքով։ Տարբերությունը դիրքորոշումն է երկրի կողմերի նկատմամբ։ Գրիգորիոպոլի հատակագիծն ունի XVIII դարի երկրորդ կեսի ռուսական քաղաքաշինական արվեստին համապատասխանող հատակագծային կուռ կառուցվածք, որում համակողմանի լուծում են ստացել բնակեցման և բնակիչների հասարակական սպասարկման հարցերը։ Դրանց թվին է պատկանում նաև ջրամատակարարման հարցը։ Այն կարգավորված է Ջորնի ձորից ջրատարի կառուցմամբ։ Դրանով ոչ միայն քաղաք հոսող խմելու ջուրը տեղաբաշխվում էր Գրիգորիոպոլի գլխավոր և թաղային հրապարակները, ուր նախատեսված էին համայնական օգտագործման ծորակներ։

ГРАДОСТРОИТЕЛЬСТВО В РЯДЕ АРМЯНСКИХ КОЛОНИЙ

Доктор архитектуры В. М. АРУТЮНЯН

Резюме

На основании литературных источников и исследований об армянских колониях в статье описывается строительная деятельность армян за пределами Армении, дается общая градостроительная оценка застройки Нор-Джуги (основан в 1605 г.), Нор-Нахичевана (основан в 1781 г.) и Григориополя (основан в 1792 г.). Одновременно приводятся краткие сведения об истории основания названных городов и поселений, отмечается процесс утери национального своеобразия в архитектуре построенных на чужбине жилых, общественных, церковных и других зданий.

---

32 Նույն տեղում, էջ 67։

33 Ժ. Անանյանն իր մենագրության մեջ չի անդրադարձել հատակագծին։ Ն. Գապուխյանը այն հայտնաբերելով արխիվում (ЦГВИА, ֆոնդ ВУА, գործ 21370), հրատարակել է իր «Գրիգորիոպոլի հատակագիծը» հոդվածում (տե՛ս «Գիտություն և տեխնիկա», 1984, № 9, էջ 53—56), սխալմամբ նշելով, որ հրատարակում է առաջին անգամ։ Իրականում առաջին անգամ հրատարակվել է դեռևս դարիս սկզբին (տե՛ս Ս. Էփրիկյան. Պատկերազարդ ընդլայնված բառարան, էջ 540)։